ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՅՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ջրի հաշիվների վերաբերյալ

Գործողություն 6.4. Ուսուցողական այց

Ուսուցողական այց Իտալիայի Իստատ

2016թ. հոկտեմբերի 11-14-ը

Վերջնական տարբերակ

Հայաստանի
Հանրապետության ազգային
վիճակագրական ծառայություն

STATISTICS
DENMARK

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 3
2. Արդյունքները 3
3.Եզրակացություններ և առաջարկություններ 6
Հավելված 1.Ծրագիր 8
Հավելված 2. Հանդիպումներին մասնակցած անձինք 8

Հապավումներ

ԵՄ	Եվրոպական միություն
ԱՎԻ	Ազգային վիճակագրական ծառայություն (օր. ՀՀ ԱՎԾ)
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրության)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Այս ուսուցողական այցն իրականացվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» Թվինինգ ծրագրի 6-րդ բաղադրիչի 6.4 գործողության շրջանակում:

Իտալիայի վիճակագրության ինստիտուտ Ուսուցողական այցի նպատակն էր ստանալ գիտելիքներ ջրերի վիճակագրության կառավարման իտալական փորձի և ջրի հաշիվների գործնական կիրառման վերաբերյալ, դիտարկել, թե ինչպես կարող է այդ գիտելիքն օգտագործվել ՀՀ ԱՎԾ-ում, ներկայացնել ՀՀ ԱՎԾ կողմից Ծրագրով նախատեսված աշխատանքները, քննարկել հետագա համագործակցության շրջանակը և անելիքները:

ՀՀ ԱՎԾ աշխատակիցները իրենց երախտիքն արտահայտում այցի ընձեռման, պատշաճ մակարդակով դրա իրականացման նախաձեռնողներին և կազմակերպիչներին, բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին, ում հետ ունեցել են գործնական և պաշտոնական հանդիպումներ:

Իստատում ստացած գիտելիքներն ու ձեռք բերած փորձառությունները, բնապահպանական հաշիվների ոլորտում Իստատի փորձի ուսումնասիրումը, փորձագետների և հանդիպումներին հրավիրված մասնագետների օժանդակությունը և պատրաստակամությունը շարունակելու աջակցությունը դրական ազդեցություն թողեցին ուսումնական այցի արդյունավետության վրա:

Սույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները և դիտարկումները պատկանում են ՀՀ ԱՎԾ-ին, ուսուցողական այցի մասնակիցներին և կարող են չարտահայտել ԵՄ, Դանիայի վիճակագրության կամ Իտալիայի Իստատի տեսակետները:

Այցն ավելի բովանդակալից դարձրեցին Այցի ծրագրով նախատեսված այցեյի Հռոմի անգնահատելի պատմամշակութային օբյեկտները:

2. Արդյունքները

Առաջին օրվա հանդիպման ժամանակ իտալացի փորձագետների կողմից ներկայացվեցին Իտալիայի վիճակագրության ազգային ինստիտուտի՝ 2016թ.-ի ապրիլի 11-ից Իստատում կառուցվածքային փոփոխությունները, որի հետևանքով տեղի են ունեցել նաև հիմնական գործառույթների տարանջատում և համապատասխան ստորաբաժանումների/վարչությունների ձևավորում.

- տվյալների հավաքագրման, մշակման և տարածման,
- մեթոդաբանության մշակման

- վիճակագրության արտադրման գծով առանձին վարչություններ՝ սոցիալական վիճակագրության և մարդահամարի, տնտեսական, տարածքային և բնապահպանության,
- ազգային հաշիվներ, որի մեջ ներառված են բնապահպանական հաշիվները:

Իտալիայի 20 վարչական շրջաններում գործում են 21 տարածքային մարմիններ՝ գրասենյակներ, որտեղ տարածքային և բնապահպանության վիճակագրության ստորաբաժանումը/վարչությունը բաղկացած է հետևյալ 3 բաժիններից և դրանց կողմից իրականացվում են հետևյալ հետազոտությունները.

- Շրջակա միջավայրի, տարածքային և տարածքային մարմինների ռեգիստրի ստորաբաժանում: Ներառում է.
  - Քաղաքային բնակավայրերի վիճակագրություն
  - Էներգետիկայի վիճակագրություն
  - Կլիմա
  - Հողեր և հողերի օգտագործում
  - GIS համակարգով աշխարհագրական վերլուծություններ
  - Վարչական տարածքներ
- Տարածքային և բնապահպանական ցանցերի ստորաբաժանում: Ներառում է.
  - Տրանսպորտ
  - Զբոսաշրջություն
  - Մշակութային ծառայություններ
  - Ջրային ծառայություններ
- Գյուղատնտեսական վիճակագրության և հետազոտությունների ստորաբաժանում: Ներառում է.
  - Գյուղատնտեսական համատարած հաշվառում:

1951թ.-ից 3 տարվա պարբերականությամբ կատարվում է քաղաքային ջրային համակարգի համատարած հաշվառում, որի մեջ ընդգրկված են կենտրոնացված ջրամատակարարման համակարգին միացված պետական հատվածի մոտ 3000 կազմակերպություններ: Վերջին՝ 2012թ.-ին իրականացված հետազոտության արդյունքներով ջրառը կազմել է 9.5 մլրդ. խոր.մ, 8.4 մլրդ խոր.մ մղվում է ջրամատակարարման կենտրոնացված կայաններ, որից 5.2 մլրդ. խոր.մ-ը՝ դեպի համայնքներ: Մատակարարված ջրի մի փոքր մասն անվճար է, օրինակ՝ ցայտաղբյուրները, վճարվում է միայն դրա շահագործման մատուցված ծառայությունների համար: Ջրհեռի 30%-ը մաքրվում է և դառնում խմելու համար պիտանի ջուր: Բնակչության 2-3%-ը չի օգտվում կենտրոնացված ջրամատակարարման

համակարգից: Հանրային ջրամատակարարման կորուստները կազմում են 35-70%: Վերջին տարիներին կորուստները մեծացել են ի հաշիվ թերհաշվառման, ջրի ֆիզիկական կորուստների և անօրինական ջրօգտագործման: Երկրում կան 18786 տարբեր նշանակության ջերի մաքրման կայաններ, որոնցից գործում են 18162:

Հանդիպմանը հրավիրված էր Շրջակա միջավայրի, հողերի և ծովի պաշտպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության անդամ Կառլո Պերկոպոն: Մասնագետը ներկայացրեց ԵՄ Ջրերի շրջանակային դիրեկտիվը (2000/60/CE) և ջրերի կառավարման կառուցվածքը Իտալիայում: Դիրեկտիվն ունի կարգավորող գործառույթ մակերևութային և ստորգետնյա ջրերի պաշտպանության ոլորտում, որի առջև դրված են հետևյալ նպատակները.

- բոլոր ջրային մարմինների համար ապահովել ջրերի «լավ որակ»
- մակերևութային և ստորգետնյա ջրերի պաշտպանություն
- ջրային ռեսուրսների կառավարում՝ գետավազանային մակարդակով
- ջրային համակարգիերից ջրերի արտահոսքի թույլատրելի սահմանների և որակի ստանդարտների մեկտեղումը
- բոլոր ջրային ծառայությունների համապատասխան միասնական սակագների սահմանում:

Հաջորդ մասնակիցը՝ պրն. Լեոնարդո Գետտան, ներկայացնում էր Տիբեր գետավազանային կառավարման մարմինը: Գետավազանային կառավարման թվով 141 տարածքների ժամանակակից սահմանները ձևավորվել են 2003թ.-ին, իսկ 2006թ-ից սկսվել է մոնիտորինգի ծրագիրը: Իտալիայի ջրային օբյեկտները թվով 82 000 են, գետային ցանցի մոտ 900 000 կմ երկարությամբ, որոնց 36%-ը անդրսահմանային են: Յուրաքանչյուր 6 տարին մեկ կազմվում է ջրային ռեսուրսների կառավարման պլանը, հերթականը սկսվել է 2016թ-ին և իրենից ներկայացնում է WFD իրականացման հստակ գործիք: Համապատասխանաբար, ներկայացվում է հաշվետվություն Եվրոմիության հանձնաժողովին: Կառավարման պլանի իրականացման գործընթացում հատկապես մեծ ուշադրություն է հատկացվում հանրային մասնակցությանը, քանի որ հիմնական նպատակը լավորակ ջրի ստացումն է:

Կառավարման պլանն իրականացնում է.

- ճնշումների և ազդեցության գնահատում՝ գետավազանային մակարդակով
- մշտադիտարկման ծրագրեր
- կառավարման նպատակների սահմանում և համապատասխան միջոցառումների պլանավորում:

Հարցադրումներ եղան ջրային տնտեսությունների կողմից իրականացվող ծառայությունների ծախսերի և գների վերաբերյալ: Իտալիայում ջրի սակագինը կազմում

է 1 եվրո 1 խոր.մ ջրի դիմաց, որը ավելի ցածր է եվրոպական այլ երկրներից (միջինը մոտ 2 եվրո): Սույն թեմայով քննարկումները շարունակվեցին այցի երկրորդ օրը: Իտալիայի վիճակագրությունում բնապահպանական հաշիվների մասով կատարվող աշխատանքների մասին ընդարձակ ելույթ ունեցավ պրն. Ալդո Ֆեմիան: Նա ներկայացրեց բնապահպանական հաշիվները, մասնավորապես՝ ջրի և օդի հաշիվների էությունը, իրականացվող աշխատանքների ներկա վիճակը, առկա խնդիրները, որոնք ըստ էության մոտ են մեր պայմաններին:

2007թ. Իտալիայում կազմվել են NAMEA (National accounting matrix including environmental accounts) օդի հաշիվները, որի մեթոդաբանության մանրամասները որոշ պարզաբանում մտցրեցին ջրի հաշիվների ֆինանսական բաղադրիչի հաշվարկման մեջ: Ներդրումների ամորտիզացիան վճարների մեջ ներառված չէ, սակայն ԵՄ պահանջն է այն ներառել բնապահպանական վճարների մեջ: Այս տարվանից ռազմավարական պլանավորման մեջ ներառվելու են նաև բնապահպանական հաշիվները: Այս հաշիվները վերաբերվում են տնտեսության և շրջակա միջավայրի փոխհարաբերություններին, ինչ ներգործություն կունենան ֆիզիկական հաշիվները տնտեսական փոփոխությունների վրա և հակառակը:

Այցի երրորդ օրը ամբողջությամբ նվիրվեց ջրերի հաշիվների կազմման մանրամասներին:

Այցի վերջին օրը քննարկվեցին ջրի ֆիզիկական հաշիվների միասնական հարցաշարի ՀՀ ԱՎԾ կողմից արդեն իսկ լրացված և խմբագրված 8 աղյուսակները (JQ-IW 1-8 tables), ինչպես նաև Ջրերի հոսքի ֆիզիկական հաշիվների (PWFA) ջրերի մատակարարման և օգտագործման աղյուսակները (Water Supply Tale, T1 and Water Use Table, T2), աղտոտիչների արտահոսքն ըստ գործունեության տեսակների, որոնք նույնպես նախապես լրացվել և տրամադրվել էին իտալացի փորձագետներին: Մեր կողմից առաջարկություն եղավ որոշակի փոփոխություն մտցնել T1 աղյուսակի կառուցվածքի մեջ, որը որոշվեց քննարկել և պատասխանն ուղարկել մեզ մինչ Իստատի փորձագետների առաջիկա այցը Հայաստան:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Այցի վերջին օրը քննարկվեցին և հստակեցվեցին նաև երկկողմանի անելիքները մինչ հաջորդ հանդիպումը:

Հավանության արժանացավ ՀՀ ԱՎԾ կողմից ջրի հաշիվների ֆիզիկական հոսքերի բաղադրիչի աղյուսակները:

Սահմանվեցին առաջիկա անելիքները: Մասնավորապես.

ՀՀ ԱՎԾ-ի մասով.

1. Համապատասխանեցնել Ջրերի հոսքի ֆիզիկական հաշիվների (PWFA) մատակարարման և օգտագործման աղյուսակներն ըստ Եվրոստատի մշակած վերջին (version 2015) տարբերակի,
2. Վերավհաշվարկել հիմնական ցուցանիշները (key indicators – table 5), որի մեթոդաբանությունը ներկայացված էր Ջրերի հոսքի ֆիզիկական հաշիվների (PWFA) նախորդ տարբերակում (version 2014):
   Իտալիայի Իստատի մասով.
3. Վերջնական ձևաչափի բերել և ՀՀ ԱՎԾ ներկայացնել Ջրի հաշիվների Ֆինանսական հոսքերի՝ մատակարարման և օգտագործման բաղադրիչի աղյուսակները և մեթոդաբանական առանձնահատկությունները,
4. ՀՀ ԱՎԾ-ին տրամադրել օդի հաշիվների արտանետումների ֆիզիկական հոոսքերի բաղադրիչի աղյուսակները:

Նշված աշխատանքներիկատարման ժամկետը՝ մինչև ս/թ նոյեմբերի 15-ը:

Հավելված 1. Ծրագիր

Օրակարգ
Ջրի վիճակագրության և ջրի հաշիվների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատանքային խմբի Իստատ 11-14.10.2016թ ուսուցողական այցի

1-ին օր (երեքշաբթի) **2016թ. հոկտեմբերի 11**		**Իստատ, Իտալիա, Հռոմ, Չեզարե Բալբո 16b** **405 սենյակ**
1	Ողջույնի խոսք և օրակարգի ընդունում 10:30 – 11:00	
2	Ներկայացում Իստատի կողմից և բնապահպանության և տարածքային վիճակագրության վերաբերյալ հիմնական գործունեությունները 11:00 – 13:00	
	Ճաշի ընդմիջում	
3	Թվինինգ ծրագիր	
2-րդ օր (չորեքշաբթի) **2016թ. հոկտեմբերի 12**		**Իստատ, Իտալիա, Հռոմ, Չեզարե Բալբո 16b** **405 սենյակ**
1	Ջրի կառավարումը Իտալիայում Շահառուների հետ հանդիպում, Գետի ավազանի տարածքային մարմին, բնապահպանության նախարարություն 10:00 – 13:00	
	Ճաշի ընդմիջում	
2 **3**	Թվինինգ ծրագիր Ջրի վիճակագրության և ջրի հաշիվների վերաբերյալ ՀՀ ԱՎԾ գործողությունները Քննարկում 14:00 – 17:00	

3-րդ օր (հինգշաբթի) 2016թ. հոկտեմբեր		Իստատ, Իտալիա, Հռոմ, Չեզարե Բալբո 16b 405 սենյակ
1	**Իստատի բնապահպանական հաշիվներ** 10:00 – 13:00	
	Ճաշի ընդմիջում	

Այցելություն Հռոմի պատմական հուշարձաններ

4-րդ օր (ուրբաթ) 2016թ. հոկտեմբերի 14		Իստատ, Իտալիա, Հռոմ, Չեզարե Բալբո 16b 405 սենյակ
1	**Թվինինգ ծրագիր** 1. Աղյուսակներ, մեթոդաբանություն, ջրի հաշիվներ, ջրի հոսքի բաղադրիչի առաջադրանքներ 10:00 – 13:00	
	Ճաշի ընդմիջում	
2 3	**Թվինինգ ծրագիր** 2. Ջրի հիշիվների ֆինանսական բաղադրիչի վերաբերյալ վիճակագրական տեղեկությունների վիճակը և աղյուսակները **Նախապատրաստում Հայաստանում հաջորդ առաքելությանը** 14:00 – 17:00	

Հավելված 2. Հանդիպումներին մասնակցած անձինք

ՀՀ ԱՎԾ մասնակիցներ.

Պրն Յուրիկ ՊՈՂՈՍՅԱՆ, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի անդամ

Տկն Նելլի ԲԱՂԴՍԱՐՅԱՆ, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ

Տկն Նաիրա ՄԱՆԴԱԼՅԱՆ, առաջատար մասնագետ, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին

Անի ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, առաջին կարգի մասնագետ, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին

Թվինինգ ծրագիր.

Անուշ ՊՈՂՈՍՅԱՆ, թարգմանիչ

Իստատի մասնակիցները.

Պրն. Ստեֆանո Տերսինյի, Իտալիայի վիճակագրություն
Տկն. Սիմոնա Ռամբերտի, Իտալիայի վիճակագրություն
Տկն. Դոնաթելլա Վիգնանի, Իտալիայի վիճակագրություն
Պրն. Ալդո Ֆեմիա, Իտալիայի վիճակագրություն
Պրն. Կառլո Պերկոպո, Շրջակա միջավայրի, հողերի և ծովի պաշտպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության անդամ:
Պրն. Լեոնարդո Գետտան, ներկայացնում էր Տիբեր գետավազանային կառավարման մարմինը